

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն.....	2
1.2. Շինարարություն.....	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր.....	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները.....	10
5.2. Բյուջեի ծախսերը.....	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը.....	12
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ.....	14
6.2. Ավանդներ և վարկեր.....	15
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	17
8. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

«Տնտեսությունը 2020թ. ճգնաժամից հետո աստիճանաբար վերականգնվում էր 2021թ. սկզբին, սակայն վերականգնման տեմպը զգալիորեն թուլացել է վերջին ամիսներին, իսկ օգոստոսին գրանցված ցածր տնտեսական ակտիվության ցուցանիշն արդեն անհանգստացնող է: Այսպես, 2021թ. օգոստոսին տնտեսական ակտիվության աճը կազմել է 2.3%, այն դեպքում, երբ նախորդ տարվա օգոստոսին տնտեսական ակտիվությունը նվազել էր 11.4%-ով: Օգոստոսի ՏԱՑ-ը հուլիսի համեմատ դանդաղել է 3.9 տոկոսային կետով, որի հետևանքով դանդաղել է նաև կուտակային՝ հունվար-օգոստոս ամիսների ՏԱՑ-ը՝ կազմելով 4.9%՝ նախորդ ամսվա 5.3%-ի փոխարեն: Եթե դիտարկենք 2021թ. աճը 2019թ. համեմատ (առանց բազայի էֆեկտի), ապա հունվար-օգոստոս ամիսներին տնտեսական ակտիվությունը նվազել է 2.0%-ով: Ընդ որում, առանց բազայի էֆեկտի տնտեսական ակտիվության անկման խորացում է նկատվում, քանի որ հունվար-հուլիս ամիսների անկումը կազմել էր 0.7%:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




Տնտեսական ակտիվության նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են, ինչի արդյունքում խորացել է հունվար-մարտ ամիսների անկումը՝ -2.0-ից դառնալով -3.5 տոկոս, և 0.1 տոկոսային կետով բարելավվել են հունվար-ապրիլից մինչև հունվար-հուլիս ՏԱՑ-երի ցուցանիշները:

2021թ. հունվար-օգոստոս ամիսների ՏԱՑ-ի 4.9% աճն առավելապես պայմանավորված է առևտրի ոլորտում տնտեսական ակտիվության աճով, որի նպաստումը կազմել է 2.6 տոկոսային կետ: Մնացած ոլորտները նույնպես ունեցել են դրական նպաստում տնտեսական ակտիվությանը, որոնցից նշանակալի է եղել ծառայությունների նպաստումը՝ 1.2 տոկոսային կետ, իսկ արդյունաբերության և


շինարարության նպաստումները կազմել են համապատասխանաբար 0.3 և 0.4 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2021թ. հունվար-օգոստոս ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Վերջին ամիսներին աճի տեմպի դանդաղումից հետո օգոստոսին արդյունաբերության ոլորտում գրանցվել է խոր անկում: Ապրիլից հետո արդյունաբերության աճի տեմպը շարունակաբար դանդաղում է: Օգոստոս ամսին գրանցվել է արդյունաբերության շուրջ 5.2% անկում, ինչի հետևանքով կտրուկ դանդաղել է նաև կուտակային աճը՝ հունվար-հուլիս ամիսների 2.1%-ից հունվար-օգոստոսին դառնալով 1.0%:

2021թ. հունվար-հուլիս ամիսների տվյալներով¹ արդյունաբերության աճը առավելապես եղել է հանքարդյունաբերության 7.3% աճի հաշվին, որի նպաստումը կազմել է 1.5 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերությունը հունվար-հուլիս ամիսներին շարունակել է անկում գրանցել՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.1%-ով և ընդհանուր արդյունաբերությանը ունենալով 0.7 տոկոսային կետով բացասական նպաստում: Օգոստոսին արդյունաբերության անկումը հավանաբար պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտի աճի տեմպի դանդաղմամբ կամ անկմամբ, որի մասին տեղեկատվությունը հասանելի կլինի հունվար-օգոստոս ամիսների սոցիալ-տնտեսական վիճակի մասին վիճակագրական տեղեկագրի հրապարակումից հետո:

«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերում գրանցվել է աճ համապատասխանաբար 9.1% և 7.2%, որոնց նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է համապատասխանաբար 1.3 և 0.1 տոկոսային կետ:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության աճը շարունակում է մնալ բավական ցածր մակարդակում: Շինարարության ծավալներն օգոստոսին աճել են ընդամենը 2.3%-ով, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ամսվա անկումը կազմել էր 5.3%: Կուտակային՝ հունվար-օգոստոս ամիսների շինարարության իրական ծավալը

¹ Արդյունաբերության կառուցվածքը 2021թ. հունվար-օգոստոս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

2020թ. համեմատ աճել է 7.3%-ով, իսկ առանց բազայի էֆեկտը հաշվի առնելու՝ 2019թ. համեմատ նվազել է 13.2%-ով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ճյուղում նույնպես նկատվում է աճի տեմպի դանդաղում: 2021թ. օգոստոսին ծառայությունների աճը կազմել է 10.8%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 3.6 տոկոսային կետով, իսկ հունվար-օգոստոս ամիսների աճը կազմել է 5.3%: Ընդ որում, ծառայությունների աճի տեմպը բացարձակ արժեքով զգալիորեն ցածր է նախորդ տարվա անկման ցուցանիշներից: 2019թ. համեմատ, 2021թ. հունվար-օգոստոս ամիսներին ծառայությունների ոլորտը գրանցել է անկում՝ շուրջ 6.2%-ով:

ՀՀ ՎԿ-ն վերանայել է ծառայությունների ոլորտի նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 0.2 տոկոսային կետով բարելավվել է հունվար ամսվա աճը, և 0.1 տոկոսային կետով բարելավվել են հունվար-փետրվարից հունվար-հուլիս ամիսների ցուցանիշները:


Հունվար-հուլիս ամիսների տվյալներով² ծառայությունների աճը կազմել է 4.5%, որին առավելապես նպաստել է «կացություն և հանրային սննդի կազմակերպում» ենթաճյուղի շուրջ 69.0% աճը (նպաստումը կազմել է 3.7 տոկոսային կետ): Ծառայությունների ոլորտի աճին շուրջ 7.9 տոկոսային կետով հակազդել է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի շուրջ 35.3% անկումը: Ծառայությունների մնացած ենթաճյուղերն ունեցել են դրական

² Ծառայությունների կառուցվածքը 2021թ. հունվար-օգոստոս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

դինամիկա՝ ընդհանուր աճին նպաստելով միջին հաշվով շուրջ 1.0 տոկոսային կետի չափով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի ոլորտում նույնպես գրանցվել է աճի տեմպի կտրուկ դանդաղում:

Օգոստոսին առևտրի ծավալների աճը նախորդ տարվա օգոստոսի համեմատ կազմել է 5.0%՝ հուլիսի ցուցանիշի համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով: Հունվար-օգոստոս ամիսների աճը նույնպես դանդաղել է՝ կազմելով 7.1%: 2021թ. հունվար-օգոստոս ամիսներին 2019թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ առևտրի ծավալները նվազել են շուրջ 5.2%-ով՝ նախորդ ամսվա համեմատ վատթարանալով շուրջ 0.9 տոկոսային կետով:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Տնտեսության բոլոր ճյուղերում տնտեսական ակտիվության դանդաղման պայմաններում դանդաղել է նաև ապրանքների արտահանման աճի տեմպը: 2021թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ապրանքների արտահանման ծավալն աճել է 13.9%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 10.4 տոկոսային կետով: Արդյունքում կուտակային աճը նույնպես դանդաղել է՝ կազմելով 21.8%:


Հունվար-հուլիս ամիսների տվյալներով³ արտահանման 23.2% աճից 12.3 տոկոսային կետը պայմանավորված է եղել հանքահումքային արտադրանքի արտահանման շուրջ 36.6% աճով (ինչն էլ իր հերթին պայմանավորված է մետաղների միջազգային գների աճով): Արտահանմանը դրական նպաստում են ունեցել նաև «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «մանածագործական իրեր» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.3 և 2.6-ական տոկոսային կետ:

Արտահանման աճին շարունակել են հակազդել «սարքեր և ապարատներ» (անկումը՝ 50.5%) և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (անկումը՝ 2.9%) ապրանքախմբերի արտահանման ծավալների անկումը, որոնք ընդհանուր արտահանման աճին հակազդել են համապատասխանաբար 1.1 և 0.4 տոկոսային կետով:

Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են, ինչի արդյունքում հունվար ամսվա արտահանման անկման ցուցանիշը բարելավվել է 0.1, հունվար-ապրիլ ամիսների ցուցանիշը վատթարացել է 0.2, իսկ հունվար-մայիս ամիսների ցուցանիշը վատթարացել է 0.1 տոկոսային կետով:

³ Արտահանման կառուցվածքը 2021թ. հունվար-օգոստոս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Վերջին ամիսներին բարձր աճի տեմպերից հետո, օգոստոսին ներմուծման ծավալները կրճատվել են: 2021թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ներմուծման ծավալները կրճատվել են 7.3%-ով, իսկ հունվար-օգոստոս ամիսների կուտակային աճը կազմել է 7.7%՝ դանդաղելով 2.8 տոկոսային կետով:

2021թ. հունվար-հուլիս ամիսների տվյալներով⁴ գրեթե բոլոր ապրանքախմբերը ներմուծման աճին ունեցել են դրական նպաստում, որոնցից առավել նշանակալի են եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «հանքահումքային արտադրանք» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը, որոնց նպաստումները կազմել է համապատասխանաբար 2.9, 2.6 և 1.2 տոկոսային կետ:


ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են նախորդ ամիսների ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում հունվար-մարտ, հունվար-ապրիլ և հունվար-հուլիս ամիսների աճի ցուցանիշները վատթարացել են 0.1, իսկ հունվար-մայիս ամիսների ցուցանիշը՝ 0.3 տոկոսային կետով:

⁴ Ներմուծման կառուցվածքը 2021թ. հունվար-օգոստոս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2021թ. հունվար-հուլիս ամիսներին միջին անվանական աշխատավարձերն աճել են, սակայն իրական աշխատավարձը նվազել է⁵: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 5.7%-ով՝ կազմելով 197,881.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 3.6%-ով և կազմել՝ 171,763.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.5%-ով՝ կազմելով 210,336.0 դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2020-2021թթ. հունվար-հուլիս ամիսներին, %




Սակայն, պետք է նշել, որ անվանական աշխատավարձի աճի տեմպը շարունակում է ավելի ցածր լինել, քան գնաճի տեմպն է, ինչի պատճառով իրական աշխատավարձերը (գնաճով ճշգրտված աշխատավարձերը) շարունակել են նվազել. 2021թ. հունվար-հուլիսին իրական աշխատավարձի նվազումը կազմել է 0.4%:

⁵ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից դադարեցվել է հաշվետու ամսվա աշխատավարձերի ցուցանիշի հրապարակումը օպերատիվ տվյալների հրապարակման հետ միասին: Փոխարենը, աշխատավարձի տվյալները հրապարակվում են ավելի ուշ՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:

4. ՓՈՒՍԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)



2021 թվականի օգոստոսին ՀՀ դրամի արժեզրկման տեմպը զգալիորեն դանդաղել է: Հունվար-օգոստոս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ դրամը արժեզրկվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, սակայն վերջին ամիսներին՝ հատկապես հունիսից սկսած, արժեզրկման տեմպը դանդաղել է: Արժեզրկման չափը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 5.9% և 12.3%: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը շարունակում է մնալ արժեզրկված, որի չափը կազմել է շուրջ 0.3%:


Ժամանակահատվածի վերջի՝ օգոստոսի 31-ի դրությամբ, ՀՀ դրամի արժեզրկման տեմպը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ մեղմվել է՝ կազմելով համապատասխանաբար 1.2% և 0.4%, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ խորացել է՝ կազմելով 1.8%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁶

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը փոքր-ինչ արագացել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2021թ. հունվար-օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 11.0%-ով, իսկ հարկային եկամուտների աճը կազմել է 10.9%: Պետական բյուջեի այլ եկամուտները հունվար-օգոստոս ամիսներին աճել են 11.8%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 40.7%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հունվար-օգոստոս ամիսներին հիմնականում պայմանավորված է եղել ԱԱՀ-ի (աճը՝ 12.7%), մաքսատուրքի (աճը՝ 36.7%) և պարտադիր սոցիալական վճարների (աճը՝ 87.2%) գծով հարկային մուտքերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.2, 1.7 և 1.5 տոկոսային կետ:

Հարկային եկամուտները շարունակում են աճել տնտեսությունից դանդաղ տեմպով: Թեև տնտեսական ակտիվության տեմպը դանդաղել է, սակայն այն

⁶ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:


բարձր է հարկերի աճից: Այսպես, հունվար-օգոստոս ամիսներին գրանցվել է 4.9% SԱՑ և 6.4% միջին գնաճ, ինչի արդյունքում անվանական տնտեսական ակտիվության աճը կազմել է շուրջ 11.6%: Մինչդեռ հարկային եկամուտներն աճել են 10.9%-ով, ինչը խոսում է հարկային վարչարարության վատթարացման մասին:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2020թ. հունվար-օգոստոս		2021թ. հունվար-օգոստոս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-5.3	-5.3	10.9	10.9
ԱԱՀ	-6.1	-2.0	12.7	4.2
Շահութահարկ	-15.9	-2.1	11.0	1.3
Եկամտային հարկ	1.8	0.5	2.7	0.8
Ակցիզային հարկ	1.9	0.1	-11.8	-1.0
Շրջանառության հարկ	-3.6	-0.1	14.1	0.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	5.1	0.2	16.4	0.6
Մաքսատուրք	-29.2	-1.8	36.7	1.7
Սոցիալական վճար	20.8	0.3	87.2	1.5
Այլ հարկային եկամուտներ	21.8	0.3	77.2	1.4
Պետական տուրք	-19.1	-0.5	21.3	0.5

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերը շարունակում են բարձր տեմպով աճել: 2021թ. հունվար-օգոստոս ամիսներին << պետական բյուջեից իրականացվել է 1184.1 մլրդ դրամի ծախս, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված ծախսերի նկատմամբ ավելի է 10.4%-ով: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ ծախսերի 8.8%, այնպես էլ կապիտալ ծախսերի մոտ 30.5% աճով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի աճի տեմպը դանդաղել է: 2021թ. օգոստոսին պետական բյուջեի ծախսերը (հիմնականում ընթացիկ ծախսերի


ավելացման հաշվին) գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդը մեծացել է ընդամենը շուրջ 12.0 մլրդ դրամով և շուրջ 6.1%-ով գերազանցում է 2020թ. համապատասխան ամիսների ցուցանիշին:

5.4. Պետական պարտք

2021թ. օգոստոսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 8,952.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ աճելով 12.4%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 8,484.8 մլն ԱՄՆ դոլար և 2020թ. նույն ամսվա համեմատ աճելով 13.4%-ով:

Օգոստոսի դրությամբ պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները հասել են 8.3%-ի՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 2.6 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը օգոստոսի դրությամբ աճել է 2.7 տոկոսային կետով՝ կազմելով 9.6%: Այս դինամիկան մտահոգիչ է, քանի որ այսպիսի բարձր տոկոսադրույքների պարտատոմսերի թողարկումը զգալիորեն մեծացնելու է կառավարության պարտքի սպասարկման ծախսերը և դժվարացնելու է պակասուրդի ֆինանսավորումը:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպի արագացումը շարունակվում է: 12-ամսյա գնաճն ընթացիկ տարվա օգոստոսին կազմել է 8.8%՝ նախորդ ամսվա նկատմամբ արագանալով ևս 0.6 տոկոսային կետով: Գնաճային միջավայրին արձագանքելով՝ ՀՀ ԿԲ-ն սեպտեմբերին ևս 0.25 տոկոսային կետով բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 7.25%: Սակայն, գնաճի տեմպի դանդաղում դեռևս չի նկատվում, ինչը մտահոգիչ է, քանի որ տնտեսական ակտիվության տեմպի դանդաղման պարագայում գների աճն ավելի մեծ չափով է վատթարացնելու բնակչության կենսամակարդակը:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2021թ. օգոստոսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը շարունակել է դանդաղել: Օգոստոսի վերջի դրությամբ ավանդների ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 6.0%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.7 տոկոսային կետով և շուրջ երկու անգամ ավելի ցածր լինելով նախորդ տարվա աճի տեմպից:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճի տեմպի դանդաղումը հիմնականում պայմանավորված է ոչ ռեզիդենտների կողմից ներդրված ավանդների շուրջ 9.9%-ով նվազմամբ, ինչի

հետևանքով դրանք ընդհանուր ավանդների աճին ունեցել են 2.7 տոկոսային կետով բացասական նպաստում:


Ավանդների աճին հիմնականում շուրջ 5.9 տոկոսային կետով, նպաստել է ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը, ինչը խոսում է այն մասին, որ ձեռնարկությունները հետաձգում են իրենց ներդրումային ծրագրերը:

Վարկերի ծավալների նվազման տեմպը 2021թ. օգոստոսին կայունացել է 3.0%-ի շուրջ: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2021 թվականի օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է շուրջ 3.0%-ով: Ընդ որում, վարկերի ծավալը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ նվազել է շուրջ 7.5%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը, %



Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ




Վարկերի նվազումը պայմանավորված է գրեթե բոլոր ոլորտներում վարկավորման նվազմամբ: Բացառություն են կազմում հիպոթեքային և շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճերը: Դա բացատրվում է հիպոթեքային վարկերի տոկոսավճարների համար եկամտային հարկի վերադարձի հնարավորությամբ և ապագայում դրա վերացման հեռանկարով:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համաճարակային իրավիճակը ՀՀ-ում սկսել է սրվել, հատկապես՝ սեպտեմբերին: 2021թ. օգոստոսից համավարակի նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը զգալիորեն աճել է հուլիսի համեմատ՝ հասնելով 388 դեպքի: Մահվան միջին օրական դեպքերը նույնպես աճել են՝ կազմելով 7 դեպք՝ նախորդ ամիսների 3 դեպքի համեմատ: Սեպտեմբերին պատկերն ավելի է վատթարացել, միջին օրական դեպքերը կազմել են 625, իսկ մահվան դեպքերը հասել են 16-ի՝ մոտենալով ընթացիկ տարվա վատագույն ցուցանիշին, որը գրանցվել էր ապրիլին:

Աշխարհի մյուս երկրների հետ համեմատության մեջ ՀՀ-ում տիրող իրավիճակը նույնպես վատթարացել է: Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով սեպտեմբերի 27-ի դրությամբ Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 47-րդ տեղը՝ նախորդ ամիս զբաղեցրած 50-րդ տեղի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով Հայաստանը տեղափոխվել է 32-րդ հորիզոնական՝ նախորդ ամսվա 34-րդ հորիզոնականից:

Գծապատկեր 20. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2021թ. սեպտեմբերի 27-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղումն արդեն անհանգստացնող է: Ընթացիկ տարվա օգոստոսին ՏԱՑ-ը կտրուկ՝ 3.9 տոկոսային կետով դանդաղել է և կազմել 2.3%, այն դեպքում, երբ նախորդ տարի նույն ամսում գրանցվել էր 11.4% անկում: Դա նշանակում է, որ ՀՀ տնտեսությունը, դեռևս վերականգնված չլինելով, նորից սկսում է բացասական ուղղությամբ ընթանալ: Այդ պայմաններում, կառավարության կողմից արդյունավետ տնտեսական քաղաքականության իրականացումն ավելի է կարևորվում, քանի որ, եթե նախորդ տարվա ցածր բազայի նկատմամբ չի հաջողվում բարձր տնտեսական աճ գրանցել, ապա հաջորդ տարիներին տնտեսական աճի տեմպի բարձրացումն ավելի բարդ է դառնալու:

2. Արդյունաբերության ոլորտում օգոստոսին գրանցվել է խոր անկում: Ապրիլից հետո արդյունաբերության աճի տեմպը շարունակաբար դանդաղում է, իսկ օգոստոսին գրանցվել է շուրջ 5.2% անկում, ինչի հետևանքով կտրուկ դանդաղել է նաև կուտակային աճը՝ հունվար-հուլիս ամիսների 2.1%-ից հունվար-օգոստոսին դառնալով 1.0%: Ենթադրաբար, անկումը պայմանավորված է հանքարդյունաբերության աճի տեմպի դանդաղմամբ, ինչը նույնպես մատնացույց է անում տնտեսության խնդիրների և հետագայում տնտեսական ակտիվության ավելի դանդաղման վտանգների մասին:

3. Հարկային եկամուտների աճի տեմպը զիջում է տնտեսական ակտիվության անվանական աճին, ինչը հարկային վարչարարության վատթարացման ազդակ է: Հունվար-օգոստոս ամիսներին տնտեսական ակտիվության անվանական աճը կազմել է 11.6%, սակայն հարկային եկամուտներն աճել են ընդամենը 10.9%-ով, ինչը խոսում է հարկային վարչարարության վատթարացման մասին: Ներկա պայմաններում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վատթարացումը կնվազեցնի կառավարության հնարավորությունները արդյունավետ տնտեսական քաղաքականություն իրականացնելու գործում՝ ավելի վտանգելով տնտեսության վերականգնումը:

4. Պետական պարտատոմսերի տոկոսադրույքների աճը շարունակվել է՝ առաջացնելով պետական բյուջեի վրա պարտքի սպասարկման ծախսերի զգալի աճի ռիսկեր: 2021թ. օգոստոսին զգալիորեն աճել են պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները՝ դժվարացնելով ներքին ռեսուրսների հաշվին պակասուրդի ֆինանսավորումը: Բարձր տոկոսադրույքների հետևանքով պարտքի տոկոսավճարների բեռի ավելացումը կնվազեցնի կառավարության հնարավորությունները արդյունավետ տնտեսական քաղաքականություն իրականացնելու գործում՝ վտանգելով հետագա տնտեսության վերականգնումը:

5. Գնաճի տեմպի արագացումը շարունակվում է, չնայած ԿԲ կողմից դրամավարկային պայմանների շարունակաբար խստացմանը: Օգոստոսին գնաճը հասել է 8.8%-ի՝ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ԿԲ-ն շարունակաբար բարձրացնում է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը: Վերջին բարձրացումը տեղի է ունեցել սեպտեմբերին, ինչի արդյունքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը հասել է 7.25%-ի: Այս պայմաններում ռիսկեր կարող են առաջանալ տոկոսադրույքի հետ կապված՝ տնտեսական ակտիվության, մասնավորապես՝ ներդրումների վրա բացասական ազդեցության ձևավորման ուղղությամբ, որն անհրաժեշտ է վերլուծել և հաշվի առնել տնտեսական քաղաքականության իրականացման ընթացքում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: